Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում:

Ղեկավար՝ Վահան Սարգսյան

Ուսուցիչ՝ Անժելա Վարդանյան

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1..... 5

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 5

ԳԼՈՒԽ 2..... 9

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ..... 9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 12

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Հանրակրթության գլխավոր նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է: Այսինքն՝ նրանց համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ապահովումը: Այստեղ կարևորվում է սովորողի ոչ միայն գիտելիքների, այլև համակարգված հիմնական կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորումը: Ֆիզիկական դաստիարակությունը կարևոր նշանակություն ունի սովորողների անձի ձևավորման, նրա ֆիզիկական ներդաշնակ զարգացման ապահովման, մտավոր առաջընթացի, բարոյահոգեբանական որակների դաստիարակման և արժեքային համակարգի ձևավորման գործում: «Ֆիզիկական դաստիարակությունը» հսկայական հասկացության տակ հասկացվում է ընդհանուր դաստիարակության հիմնական մասը՝ հանրակրթական, գիտական, կրթական դասընթացներ, որոնք ուղղված են մարդու կողմից իր ֆիզիկական արժեքների արժեորմանը: Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ: Նոր սերնդի հասարակական կյանքի, արժեքների նկատմամբ ունեցած վերաբերմունքն ու բարոյական սկզբունքները տարբերվում էին նախորդներից: Կյանքը կառուցվեց նոր կանոնների և նոր նորմերի վրա:

Նոր սերնդի համար ժամանակակից աշխարհն իր արժեքային համակարգով բավականին բարդ ու անկանխատեսելի էր թվում:

Հետազոտության նպատակը: Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել և ուսումնասիրել հանրակրթական դպրոցներում արժեքային համակարգի ձևավորումը աշակերտների մոտ շախմատ առարկայի դասավանդման ընթացքում:

Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք էլ ապահովում են աշխատանքի տրամաբանությունն ու կառուցվածքը։

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ **խնդիրները՝**

- Պարզաբանել արժեքային համակարգի դերը դասաժամերին։
- Լուսաբանել արժեքային համակարգի ձևավորման գործընթացը և յուրացումը։
- Ուսումնասիրել շախմատ առարկաների դասավանդման ընթացքում երեխաների մոտ ձևավորված արժեքների բացահայտմանը։

Հետազոտության մեթոդները: Հետազոտության կիրառված մեթոդներն են՝ դիտարկում, վերլուծություն և այլն։

ԳԼՈՒԽ 1

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Արժեքային համակարգի ձևավորումն անհնար է պատկերացնել հասարակությունից, մարդկանց հետ շփումից զատ: Անձի արժեքների համակարգը ձևավորվում է սոցիալականացման ընթացքում ինտերիորիզացիայի (ներքնայնացման)՝ հասարակական-քաղաքական, բարոյական, գեղագիտական իդեալների (հասարակական փորձ և մշակույթ) յուրացման միջոցով, որոնք բնորոշ են տվյալ սոցիալական հանրությանը: Արժեքային համակարգի ձևավորումն ընթանում է դաստիարակության և կրթության ընթացքում սոցիալական փորձի յուրացման միջոցով: Անձնային արժեքները ձևավորվում են սոցիալականացման ամբողջ ընթացքում:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը [1]: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների

[1] https://vsu.am/grqer/2017/aprak/paremuzyaninna.pdf

նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից» [2, 22]:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է» [3, 64]:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու

---

[2] Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 317 էջ:
[3] Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 317 էջ:

կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը» [4, 59]:

Բազմաթիվ մանկավարժներ, հոգեբաններ, հետազոտական, կրտսեր աշակերտների կրթության և դաստիարակության արդյունավետության խնդիրը պահել են իրենց ուշադրության կենտրոնում Ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջոն Գյոլին, հավատում է, որ կրթությունը, ապրելակերպ է և ոչ թե ապրելու նախապատրաստություն: Ինչպես Սոկրատեսը՝ իր սաներին էր սովորեցնում մտածել տրամաբանորեն և վերլուծելով, այնպես էլ, այժմ մենք, շախմատի ուսուցիչներս մեր սաներին սովորեցնում ենք տրամաբանորեն և վերլուծելով մտածել:

Վենեսուլլայում անցկացված հետազոտության արդյունքները ցույց են տվել , որ 4 ամիս շախմատով զբաղված երեխաները բարելավել են իրենց ինտելեկտը : 2003 թվականին այս եզրակացությանն է եկել նաև գիտությունների դոկտոր Մուրեյ Թոմփսոնը: Իր հետազոտության ժամանակ այն մասնակիցները, ովքեր շախմատ էին խաղում, ցույց են տվել ինտելեկտի ավելի բարձր մակարդակ; Թոմփսոնը սա վերագրում է կենտրոնացվածությանը և տրամաբանական մտածողությանը, ինչը զարգացնում է շախմատը:

Շախմատը զարգացնում է թվաբանական ունակությունները: 1998 թվականին «Շախմատի ուսուցման ազդեցությունը մաթեմատիկական ձեռքբերումների վրա» վերնագրով ուսումնասիրություն անցկացվեց՝ Ջեյմս Սմիթի և Ռոբերտ և Քեյջի կողմից;

Նրանք ցույց տվեցին, որ շախմատը շատ կարևոր է երեխայի մաթեմատիկակա

ընդունակությունների բարելավման համար; Փորձարկվողները ամերիկական և աֆրիկական ավագ դպրոցների աշակերտներ էին, ում 120 ժամ շախմատ ուսուցանվեց:

[4] Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др., М., 1978, 452 с

Այնուհետև անցկացված մաթեմատիկայի թեստի արդյունքները ավելի բարձր էին այս երեխաների մոտ, քան նրանց, ովքեր չէին մասնակցել հետազոտությանը; Ֆոկտոր Էրիկ Ֆոտիյեբը կարծում է, որ մի քանի քայլ նախապես մտածելու ունակությունը գլխավոր գրավականն է, ինչի շնորհիվ շախմատիստներն ուժեր են լինում մաթեմատիկայից;

Շախմատը զարգացնում է վերբալ կարողությունները:

Շախմատը հարստացնում է զգացմունքային ինտելեկտը, սոցիալ-հոգեբանական կարողությունները:

Զգացմունքային ինտելեկտը, մարդու զգացմունքները ընկալելու, դեկավարելու, գնահաաելու կարողությունն է: Ըստ դոկտոր քիոզ Մարի Ստաֆսի շախմատն օգնում է համախմբել տարբեր մարդկանց անկախ ռասայից ու սոցիալ կարգավիճակից, ինչի արդյունքում էլ շախմատը զարգացնում է զգացմունքային ինտելեկտը և սոցիալ-հոգեբանական հմտությունները:

Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ» [5, 65]:

<<...Դպրոցը պետք է <<սովորեցնի ապրել>>, սովորեցնի ապրել նոր ձևով, ընկերական սերտ միաբանությամբ, որ դպրոցը դաստիարակի հոժարակամ կարգապահություն, համատեղ աշխատելու ունակություն, դաստիարակի զգայնություն ուրիշի դժբախտության և վշտի նկատմամբ>>[6]:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

---

[5] Я. Корчак, Избранные педагогические произведения, М., 1979, 458 с.
[6] Կրուպսկայա, Ուսուցչի մասին, Երևան -1960, էջ185:

ԳԼՈՒԽ 2

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարեւորում ենք արժեքների ձեւավորումը գալիք սերնդի մոտ եւ միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է, որը լավագույն կերպով մատուցվում է հայոց պատմության դասընթացների ժամանակ: Այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Հոգեբանները շախմատն անվանում են հիշողության գործառույթը բարելավելու աշխատող տարբերակ: Այն հնարավորություն է տալիս լուծել համկարգային խնդիրները. և զարմանալի չէ, որ շախմատը խորհուրդ է տրվում Այցհայմերի հիվանդության ժամանակ: Շախմատը բարելավում է մարդու ինտելեկտը: Շախմատը բարելավվում է երեխաների ուսման առաջադիմությունը, ինչպես նաև, թողնում է մի շարք դրական ազդեցություններ:

Տարբեր ոլորտներում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ շախմատը թ՛ե մեծերի, թ՛ե փոքրերի մոտ բարելավում է մի շարք իմացական գործընթացներ: Շախմատը նպաստում է երեխաների ուղողի զարգացմանը: Ապացուցվել է, որ շախմատը բարելավում է երեխաների վերլուծական և քննադատական մտածողությունը, տեսանելիությունը հատկապես՝ երկրորդ և երրորդ դասարանցիների մոտ, ինչը նպաստում է այս տարիքային խմբի երեխաների արագ մտավոր զարգացմանը:

2011 թվականից սկսած՝ <<Շախմատ>> առարկայի մուտքը հանրակրթության ոլորտ նոր և առաջադեմ քայլ էր գրեթե բոլոր տեսանկյուններից: Այսօր արդեն վստահաբար կարելի է խոսել <<Շախմատ>> առարկայի իմացական, հուզական և վարքային ներուժի մասին, թե որքանով է առարկայի դասավանդումը նպաստում կրտսեր դպրոցականի մտավոր և անձնային որակների զարգացման վրա՝ տրամաբանական, պատկերային մտածողության և երևակայության դրսևորմամբ:

2023թ. հոկտեմբերին անց եմ կացրել երկու փորձարարական դաս 4Բ-րդ դասարանում:

Դասերի ընտրված թեման էր <<Ծանրաբեռնված խաղաքար>>: Խնդիրը, ըստ դասարանների, տարբերվում են իրենց բարդությամբ, լուծման եղանակներով, սկզբունքներով, բացատրություններով: Սակայն, երկու դասարաններում էլ թեմայի վերաբերյալ խնդիրների լուծումը պտտվում է նույն առանցքի շուրջ, այսինքն, երկու դեպքում էլ հիմքը մատային դիրք ստեղծելու գաղափարն է՝ շախմատ խաղի գլխավոր նպատակը: Դրան հասնելու համար, անհրաժեշտ է մտածել տրամաբանորեն, պատկերացնելով, թե երբ է արքան ընկնում մատային ցանցի մեջ: Խաղի իմաստը կայանում է նրանում, որ աշակերտները կարողանան արագ կողմնորոշվել: 4-րդ դասարանի աշակերտներին բաժանել եմ երկու խմբի, մի խմբում ընդգրկել եմ բարձր առաջադիմությամբ աշակերտների, մյուս խմբում՝ ցածր առաջադիմությամբ աշակերտների: Ցածր առաջադիմությամբ հագեցված աշակերտների խումբը, իր ակտիվությամբ ու խաղի կանոնները ընկալելու և կատարելու տեսանկյունից չի զիջել մյուս խմբին և պայքարը ավարտվել է շախմատային ոչ-ոքիով: Չորրորդ դասարնցիների պահվածքը, վարվելաձևը,խաղի կանոնները պահպանելը, ավելի ընդգծված էր, պտասխանատու կեցվածքով: Այստեղ, երևի թե, տարիքն էր իր խոսքն ասում և այն հանգամանքը, որ նրանց համար 4-րդ դասարանը ավարտական է, շախմատային առումով:

Ուսուցիչ՝ Ա. Վարդանյան

Դասարան 4-րդ	Ուս. տարի 2023-2024
Դասի նպատակ	Ուսուցանել ծանրաբեռնված խաղաքար մարտավարական հնարքը: Զարգացնել աշակերտների հաշվարկային և վերլուծական ունակությունները:Ներկայացնել մարտավարական հնարքների ժամանակ խաղաքարերի համագործակցության կարևորությունը:
Դասի վերջնարդյունքներ	Սովորողը կարողանում է դիրքը գնահատել , տարբերակել խաղաքարերի շարժունակությունը (որ խաղաքարն է ավելի լավ զարգացած) և կարողանում է խոչընդոտ հանդիսանալ հակառակորդի խաղաքարերի համար: Օգտվելով խաղքաքարերի անբարենպաստ դիրքից , երբ մեկ խաղաքարը զբաղված է մինգամից մի քանի դաշտի հսկողությունով, շեղում է ծանրաբեռնված խաղաքարի ուշադրությունը, զոհաբերում խաղաքարը և հասնում ցանկալի արդյունքի:

Մեթոդներիկ մանրաման նկարագրություն	Պատմողական, ուղղորդող հարցերի միջոցով : Օգտագործելով համատեղ խմբային մտագրոհ մեթոդը: Դասարանը բաժանում ենք ըստ շարքեր 3 խմբի: Համարակալում ենք խմբերը ըստ շարքերի՝ I, II, III խմբեր: Ստեղծում ենք ոգեշնչող , անկաշկանդ միջավայր երեխաների համար: Ցուցադրական խաղատախտակին շարված է դիրք ծանրաբեռնված խաղաքար թեմայից: Խմբերին հանձնարարվում է՝ 1. Գնահատել դիրքը 2.Գտնել սպիտակների ակտիվ խաղաքարերը: 3.Գնահատում ենք սևերի խաղաքարերի դասավորությունը և դիրքային թուլությունները: 4.10 րոպե քննարկում: Ակնկալվող ճիշտ պատասխանն է՝ I տարբերակ 1. Նc8 –Փc8 2.Նe8+# II տարբերակ 1.Նc8-փe8 2.Նe8+# Վերն նշված 4 կետերի պատասխանը՝ խմբերի

	ավագների կողմից ժամանակին ստանալուց հետո կատարվում է դիրքի վերլուծություն՝ ուսուցչի գլխավորությամբ:
Միջառարկայական կապեր	Ծանաբեռնված խաղաքարի օրինակով միջառարկայական կապ տանել մաթեմաթիկայի հետ: Օրինակ եթե մաթեմաթիկայում գումարելիների տեղերը փոխելիս գումարը չի փոխվում՝ ապա, շախմատում գումարը փոխվում է: 1.Նc8+ - Փc8 2 Նc8+# (մատ է) 2.Նe8+ - Փe8 2 Նc8(մատ չէ)
Անհրաժեշտ նյութեր , տեխնիկական միջոցներ, ՏՀՏ	Ցուցատախտակ, գիրք, տետր, lichess.org. learningapps.com
Ձևավորող արժեհամակարգեր	Այսօր արդեն վստահաբար կարելի է խոսել <<Շախմատ>> առարկայի իմացական, հուզական և վարքային ներուժի մասին, թե որքանքվ է առարկայի դասավանդումը նպաստում կրտսեր դպրոցականի մտավոր և անձնային որակների զարգացման վրա՝ տրամաբանական, պատկերային մտածողություն և երևակայության դրսևորմամբ: Շախմատի միջոցով բացառիկ հնարավորություններ են ընձեռնվում կայունացնելու երեխաներ ուշադրությունը՝ ճանաչողական և հուզական ոլորտներում: Արդար և ազնիվ խաղը՝ անձնային որակների ձևավորման հիմք է դառնում երեխաների վարքի բոլոր դրսևորումներում:

Տարբերակված ուսուցման համար առաջադրանքներ	Ըստ կարողությունների ԱՈՒՊ-ով երեխանեչի համար կան բազմաթիվ մուլտիերոսներով պատկերներ , ծանրաբեռնված խաղաքարի մասին ավելի հանգամանալից կարծիք կազմելու համար: Օրինակ՝ տե՛ս ՏՀՏ-ում:

Միավորային և ձևավորող գնահատական	Ձևավորող կամ միավորային գնահատում ըստ խմբերի (տե՛ս մեթեդների մանրամասն նկարագրում) ; Խմբային աշխատանքի ժամանակ երեխաներին նախապես բաժանվում է կանոնակարգ խաղի վերաբերյալ , որի միջոցով կատարվում է ձևավորող գնահատականը: Օրինակ՝ 1.Ամենաարագ 2 .Համխմբված 3.համագործակցող 4.կանոններին հետևող լավագույն թիմը: Հարց ու պատասխանի միջոցով կարելի է թիմի անդամներին առանձին-առանձին գնահատել միավորային սանդղակով:

Այսպիսով, բոլոր ուսումնական առարկաները ճիշտ միջառարկայական կապերի կիրառմամբ, խմբային խաղերի միջոցով, բեմականացումներով, քննարկումներով, սալիկաշարերի պատրաստմամբ, միջոցառումների անցկացմամբ, խաղերի միջոցով, ներկայիս լայն մեթոդաբանական գործիքները կիրառելով կարող են, նորովի և նոր մոտեցմամբ, աշակերտների մեջ սերմանել արժեքային մի ամբողջ համակարգ:

Այսպիսով՝ մենք պետք է ճիշտ ուղղորդենք աշակերտներին, առավել ևս ներկայիս տեղեկատվական բազմանյութ իրականության մեջ, որպեսզի իրենց ուրույն դիմագիծը ճիշտ ձևավորեն արժեքային համակարգի կոնտեքստում և երբեք չկորցնեն այն: Կյանքի տարբեր ոլորտների նկատմամբ վերաբերմունքը սովորողների մեջ ձևավորվում է կրթության ընթացքում ստացած տեղեկույթի միջոցով: Կրթության սոցիալական ինստիտուտի միջոցով իրականանում է արժեքային մշակույթի փոխանցումը սերնդեսերունդ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտական աշխատանքը կատարելուց հետո եկանք հետևյալ եզրահանգումներին:

- Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:
- Արժեքային համակարգը անքակտելիորեն կապված է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ մշակույթը և հասարակությունը: Մարդը դրսևորվում է սոցիումի մեջ և իր վրա է կրում տվյալ միջավայրի մշակութային փոփոխությունները:
- Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղները կլինեն իրական արժեքները:
- «Շախմատ» առարկան մեծ դեր է խաղում աշակերտների անհատականության և արժեհամակարգի ձևավորման մեջ:
- Առարկաների ճիշտ համագործակցության և միջառարկայական կապերի շնորհիվ է, որ աշակերտների մեջ արժեքները ձևավորվում են ավելի ընդլայնված ու խորը:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում թեմայով հետազոտական աշխատանքը ավարտելուց հետո կարող ենք անել հետևյալ **առաջարկությունները**.

- Սովորողների արժեքային համակարգը բազմակողմանի զարգացնելու համար հարկ է նրանց ավելի շատ ներառել արտադասարանական միջոցառումների մեջ:
- Թատրոններ հաճախելը, էքսկուրսիաները, պատմամշակութային վայրեր այցելելը, հայտնի արվեստագետների, քանդակագործների և արհեստագործների արվեստանոցներ ու արհեստանոցներ այցերը ևս պետք է ներառված լինեն ուսումնական հաստատության գործունեության մեջ, ինչը կարծում եմ էլ ավելի պատկերավոր կդարձնի արժեքների ըմբռնումը:

- Դասաժամերին հավելյալ քննարկումները, պատմությունից օրինակները ևս լավ միջոց են արժեհամակարգ ձևավորելու: Միջմշակութային հաղորդակցությունը, նոր մշակույթների հետ ծանոթությունը, նույնպես կարող են ձևավորել արժեքներ սովորողների մեջ:
- Կազմակերպել հանդիպումներ, ականավոր գործիչների հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Տարրական դպրոցի <<Շախմատ>> առարկայի չափորոշիչները:
2. Հայաստանի շախմատի ակադեմիա <<Շախմատի դասավանդման հոգեբանական ձեռնարկ>> Երևան 2011թվ.: շ
3. Ալբերտ Ֆրանկ <<Շախմատ և ընդունակությունները>> 1973թվ.:
4. Ռոբերտ Ֆերգյուսոն <<Շախմատ կրթության մեջ>> հետազոտություն, 1995թվ.:
5. Հ. Թումանյան << Շախմատ>> 2, Ուսուցչի ձեռնարկ, Երևան 2011թվ.:
6. Հ. Թումանյան <<Շախմատ>> 3, Ուսուցրի ձեռնարկ, Երևան 2012թվ.:
7. Հ.Թումանյան <<Շախմատ>> 4, Ուսուցչի ձեռնարկ, Երևան 2013թվ.:
8. Ս. Միսակյան Մեթոդական ուղեցույց 2-4-րդ դասարանների աշակերտների համար, Երևան 2013թվ.:
9. Ս. Միսակյան, Ուսումնամեթոդաիկան ձեռնարկ 2-4-րդ դասարանների աշակերտների համար , Երևան 2018թ վ.:
10. Տիգրան Պետրոսյան <<Շախմատ և ինտուիցիան>> , ռեֆերատ Երևան 1968թվ.
11. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ., 112 էջ:
12. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ., 86 էջ:
13. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 317 էջ:
14. Զեյնալյան Ն. Ա., Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն»
15. Ա. Ե. Օլշաննիկովա, Հույզեր և դաստիարակություն, Երևան, 1985թ., 84 էջ:
16. Հանրակրթության պետական չափորոշիչ
17. Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др., М., 1978, 452 с.
18. Я. Корчак, Избранные педагогические произведения, М., 1979, 458 с.
19. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
20. https://www.arlis.am/documentview